Հովհաննես Թումանյան

Մոծակն ու մրջյունը

Գիժ Մոծակի պարի ժամին
Ջարկեց հանկարծ աշնան քամին,
Ուժը խլեց, ուշքը տարավ:
Գիժը մին էլ մըտիկ արավ,

Որ էն արև
Աշխարհքն արդեն պատած ողջ սև,
Լացով, թացով սուգ է անում,
Դողում, պաղում ու դալկանում...
Շուտիկ, շուշտիկ իրեն կինն էլ

Սուսիկ-փուսիկ կողքից կորել,
Ով գիտի՝ ինչ ծակ էր գըտել,
Մինչև գարուն մեջը մըտել:
Սոված, սառած
Ու սալարած

Վեր թըռավ՝ վար, դես ընկավ, դեն,
Ժիր Մըրջյունի տաքուկ ու շեն
Բունը հիշեց, եկավ գընաց,
Դըռան առջև տըխուր տըզզաց.
Բա՛ց արեք, բա՛ց...

Էս տարաժամ թրշվառ ձենից
Կոպիտ, թուխ-թուխ,
Հաստագրլուխ
Մի պահապան զարթնեց քնից,
Ներսի մրթնում մի կերպ արավ,

Փակած դուռը նեղ ծերպ արավ,
Տեսավ՝ սևով, թևով զուգված՝
Դրռան առջև մինը տրնկված,
Ոտները թել,
Ինքը մի գել:

Հե՛յ, ո՞վ ես դու,
Ա՛խպերացու:
Տը՛գ-պը՛զգ, ասավ, Մոծակն եմ ես:
Բա չե՞ս ասիլ՝ էսպես, էսպես.
Ամառն ամբողջ,

Ուրախ, առողջ,
Պայծառ ու տաք
Արևի տակ
Կինըս աշխույժ սազ էր ածում,
Ես էլ անհոգ խրնդում, ցրնծում,

Տեսակ-տեսակ պարեր պարում,
Սրրա նրրա թուշն համբուրում
Ու վայելում ամեն բանից,
Ամեն բարուց ու սեղանից,
Լիքը այգում,

Ճահճոտ մարգում,
Ճոխ տրներում,
Պալատներում...
Մի անգամ էլ, երբ որ էսպես

Պարում էի, մինը անտես

Էնպես զարկեց՝ ուշքըս անցավ:
Ուշքի որ գամ՝ ի՞նչ տեսնեմ լավ,
Երկինքը թուխպ, երկիրը սև,
Դառը քամի, սառը անձրև,
Արար աշխարհ պաղել, փոխվել,

Կողքիցըս էլ կինս է փախել...
Էլ ի՞նչ ասեմ, ողջը մի-մի
Էն ի՞նչ լեզու կարա պատմի
Կամ ի՞նչ բերան,
Չըտեսնըվա՜ծ, հըրաշք մի բան...

Հիմի էսպես՝ սոված, մենակ,
Մընացել եմ պատերի տակ,
Տեղ չի ունեմ, կեր չի ճարվում,
Ես էլ եմ հո շատ մըճըրվում.
Բայց ի՞նչ անեմ, ո՞ւր գընամ էլ,

Երեսս էլի ձեզ եմ արել:
Աստծու սիրուն, մի՛ խընայեք,
Էս մի ձըմեռ շահեք, պահեք,
Մինչև նորից գարուն բացվի,
Աշխարհքն էլ ետ բարով լըցվի:

Դե լա՛վ, դու կաց, ներս գընամ ես,
Տեսնենք ներսից ինչ կասեն քեզ:
Ասավ պահնորդն ու մեջեմեջ
Կոկ սենյակներն անցավ անվերջ,
Մինչև հասավ ներսի տունը,

Ուր ապրում էր մեծ Մըրջյունը՝
Առատ կյանքով,

Իր համայնքով:
Գընաց իրենց լեզվով հայտնեց,
Մըրջյունը լուռ լըսեց, մըթնեց,

Ու ետ դարձավ էապես ասավ.
Գիժ Մոծակի համա՞ր եմ ես
Ողջ ամառը արևակեզ՝
Էնքան ջանքով
Ու տանջանքով
Տուն տեղ դըրել, ճամփա հարթել,

Ամբար շինել, պաշար կիտել,
Որ ամառը ծույլ պըտըտի,
Ձմեռը գա նըստի ուտի՞...

Մեր ծույլերին ջարդել ենք մենք,
Ուրիշ ծույլի՞ բերենք պահենք...
Կերթաս կասես էդ անպետքին.
Բանի, գործի ժամանակին
Ով փոխանակ աշխատելու,

Ուշք ու միտքը տա խընդալու,
Պարապ շըրջի, երգի, պարի,
Սրրա նըրա թուշն համբուրի,
Էս կուռ վազի, էն կուռ ցատկի,
Վերջը էդպես պիտի սատկի:

1916